ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/1-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **27 -ը մայիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ**-ն՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն **Ա. Դավթյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **19.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-9/1-6** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***2,685,214 (երկու միլիոն վեց հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր տասնչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Ղ. Փարպեցու 22/14
ՀՀ ՖՆՆ գանձապետական վարչություն	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011414129	Հ/Հ 1660004154880100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02542882
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	գլխավոր տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԴԱՎԹՅԱՆ

AM0326542

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/1-6 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Հ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ.	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.
7.	Տերբինաֆին (տերբինաֆինի հիդրոքլորիդ)	հատ	250	1,942.92	485,730	125	125	
34.	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ)	հատ	3800	239.33	909,454	1800		2000
50.	Պիպեկուրոնիումի բրոմիդ	հատ	1500	708	1,062,000	500		1000
53.	Տոլպերիզոնի հիդրոքլորիդ	հատ	3000	76.01	228,030	1500	1500	
Ընդամենը՝					**2,685,214**			

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/1-6 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին /ՀՀ դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝							
				Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ.
7.	**Տերբինաֆին d01ae15, d01ba02**/Տերբինաֆին (տերբինաֆինի հիդրոքլորիդ)	33631120/502	485,730	242,865	242,865	485,730	485,730	485,730	485,730	485,730	485,730
34.	**Հակահիստամինային միջոցներ՝ պարբերական կիրառման համար**/Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ)	33631284/509	909,454	430,794	430,794	430,794	430,794	430,794	909,454	909,454	909,454
50.	**Պիպեկուրոնիումի բրոմիդ m03ac06**/Պիպեկուրոնիումի բրոմիդ	33631350/503	1,062,000	354,000	354,000	354,000	354,000	354,000	1,062,000	1,062,000	1,062,000
53.	**Տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04**/Տոլպերիզոնի հիդրոքլորիդ	33631380/501	228,030	114,015	114,015	228,030	228,030	228,030	228,030	228,030	228,030
Ընդամենը			**2,685,214**	**1,141,674**	**1,141,674**	**1,498,554**	**1,498,554**	**1,498,554**	**2,685,214**	**2,685,214**	**2,685,214**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ
գլխավոր տնօրեն

Ա. ԴԱՎԹՅԱՆ

AM 0326542